«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	«Մայրենի լեզվից տրվող առաջադրանքները որպես սովորողների ուշադրության, հիշողության մտածողության և խոսքի զարգացման միջոց»
ԱՌԱՐԿԱ	Մայրենի
ՀԵՂԻՆԱԿ	Աստղիկ Կոստյայի Սարդարյան
ՄԱՐԶ	Արմավիր
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Փարաքարի միջնակարգ դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ 5

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ 6

ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ 7

ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ 8

ՀԵՏԱՔՐՔՐԱՇԱՐԺ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ 9

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄ 12

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 15

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տարրական դասարաններում լեզվական գիտելիքները իրենց բնույթով և շարադրանքով ունենեն որոշակի գործնական ուղղվածություն, ճանաչողական կիրառական արժեք:

Մայրենիի դասընթացը ներկայանում է որպես երկու հիմնական մասերի՝ ճանաչողական արժեք ունեցող գործնական, մատչելի քերականական գիտելիքների և ընթերցանության նյութերի ամբողջություն:

Մայրենիի դասաժամերին տրվող լեզվական առաջադրանքները և առաջադրված թեմաները, պետք է նպաստեն երեխայի ուշադրության, հիշողության, մտածողության տարբեր որակների և խոսքի զարգացմանը:

Տարրական դասարաններում մայրենիի դասերի խնդիրներն են՝

1. Սեր և հետաքրքրություն առաջացնել գեղարվեստական գրականության նկատմամբ: Դրա համար անհրաժեշտ է ընթերցարաններում զետեղել այնպիսի բնագրեր, որոնք ունեն բարձր գեղարվեստական արժեք և համապատասխանեն կրտսեր դպրոցականի տարիքային առանձնահատկություններին:
2. Զարգացնել աշակերտների տրամաբանական մտածողությունը, երեխաներին նպատակաուղղեն խորհելու, ինքնուրույն դատողություններ անելու:
3. Աշխատանք տանել կարդացածը հասկանալու և վերարտադրելու կարողությունների մշակման ուղղությամբ:
4. Ընթերցանության բնագրերում եղած բառերն ու արտահայտությունները, գեղարվեստական պատկերավորման միջոցները դարձնել աշակերտների սեփականությունը, զարգացնել խոսքը:

Ընթերցանության դասերին երեխաներին գործնական կերպով մայրենի սովորեցնելիս հաշվի է առնվում, որ լեզուն և միտքը, բառը և իմաստը անխզելի միասնություն են կազմում, որ չկա լեզու մտքից անկախ և բառ՝ իմաստից անկախ, որ լեզուն հենց այնքանով է արժեքավոր, որքանով որ այն մտքի արտահայտությունն է: Ընթերցանությունը մայրենիի ուսուցումն ապահովում է կենդանի, գեղեցիկ ու ճիշտ կառուցված խոսքի ընդօրինակումով: Ընթերցանության դասերի ընթացքում պահանջվում է նյութից բխող ինտեգրում նույն դասարաններում, դասավանդվող այլ առարկաների միջև՝ երաժշտության, կերպարվեստի,

մաթեմատիկայի, ես և շրջական աշխարհի և այլ առարկաների միջև: Տարրական դասարաններում մայրենիի դասագրքերը կազմված են հենց ինտեգրման սկզբունքով, որի պահանջն է՝ իրականացնել հայոց լեզվի գործնական ուսուցում ընթերցանության նյութերի միջոցով, այսինքն՝ ինտեգրում ընթերցանության և քերականության միջև:

Հետևաբար անհրաժեշտ է աշակերտին տալ մի բանալի որով հնարավոր է դառնում բացել փակ դռները և վերցնել այն պաշարը, որը կարող են կյանքի կոչել, կիրառել: Լեզուն է գիտելիքների բանալին. Որքան ճկուն ու հարուստ է լեզուն, այնքան հեշտ ձեռք կբերվեն գիտելիքները:

Հաճախ երեխային <<Ես սովորեցի>> արտահայտությունը չի համընկնում <<Ես հասկացա>>, <<Ես կարող եմ>> ձևակերպումներին: Երեխան գիտակցում և համարժեք գնահատական է տալիս իր իմացած - չիմացածին, այն դեպքում միայն, երբ սովորածը սովորեցնում է ինչ- որ մեկին: Ըստ Վիգոտսկու <<Կսովորես այն ժամանակ, երբ կսովորեցնես ուրիշի>>:

Այսօր տարրական դպրոցն աստիճանաբար հաղթահարում է նեղ առարկայական ուղղվածությունը, ողջ աշխատանքը կազմակերպում է սովորողի անձի ընդհանուր և ներդաշնակ զարգացումն ապահովելու համար:

Մայրենի լեզվի դասաժամերին լուծվում են տարրական դպրոցի համար խոր և ընդհանրական խնդիրներ՝ուշադրության և հիշողության, մտածողության և կապակցված խոսքի միաժամանակյա, անընդհատ և ներդաշնակ զարգացումը: Կրտսեր դպրոցում մայրենի լեզվի դասաժամերին տրվող լեզվական առաջադրանքները պետք է նպաստեն երեխաների ուշադրության, հիշողության տարբեր որակների և խոսքի զարգացմանը, այսինքն դրանք ունեն երկակի բնույթ. Մի կողմից հանձնարարվում են որպես լեզվական կամ խոսքային առաջադրանքներ, մյուս կողմից իրենց հիմքում անձի հոգեբանական ոլորտի, ինչպես նաև մտածողության և կապակցված խոսքի ձևավորմանն ու զարգացմանն են նպաստում:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ուսուցման գործընթացն անհնար է իրականացնել առանց լավ զարգացած ուշադրության: Ուշադրության շնորհիվ մարդը կարողանում է կնտրոնանալ որևէ առարկայի, երևույթի կամ մտքի վրա: Երեխայի մոտ դեռևս գերակայում է ոչ կամածին ուշադրությունը. արտաքին վառ, անսպասելի, հետաքրքիր տպավորությունները հեշտությամբ կարող են շեղել նրա ուշադրությունը առաջադրանքից: Դեռևս թույլ է զարգացած նաև ուշադրության կայունությունը՝ 1-2-րդ դասարանցիները չեն կարողանում տևական ժամանակ կենտրոնանալ որևէ աշխատանքի վրա, մանավանդ, եթե վերջինս անհետաքրքիր և միապաղաղ է:

Ուշադրության զարգացման համար ընդհանրական միջոց է խոսքը: Առաջադրանքը կատարելիս երեխան հաճախ բարձրաձայն կրկնում է հրահանգը: Առավել արդյունավետ է քայլ առ քայլ տրվող հրահանգը. այն կազմակերպվում և օգնում է ծրագրել երեխայի գործունեությունը:

Ուշադրությունը մարզելու համար տրվում են այնպիսի առաջադրանքներ, որոնք կենտրոնացում են պահանջում:

1. Երեխային առաջադրվում են մի շարք պարզ բառեր՝ *տուն, ծառ, կատու, ծաղիկ, գիրք, շուն և այլն:*

Ըստ նախնական պայմանավորվածության՝ նա պետք է ծափահարի, երբ լսում է համապատասխան, օրինակ՝ կենդանի նշանակող բառը: Եթե երեխան սխալվում է, անհրաժեշտ է ևս մեկ անգամ կրկնել առաջադրանքը: Երկրորդ փուլում կարելի է առաջարկել, որ երեխան ոտքի կանգնի, երբ լսում է, օրինակ՝ բույս նշանակող բառը: Երրորդ փուլում կարելի է միավորել առաջին երկու առաջադրանքները, այսինքն՝առաջարկել երեխային ծափահարել, երբ լսում է կենդանի նշանակող բառը և ոտքի կանգնել, երբ լսում է բույս նշանակող բառը:

2. «Բառը բառի մեջ»: Այս խաղը երեխաների ուշադրությունը զարգացնելու համար: Երեխաներին առաջարկել գտնել երկու բառ, որոնք թաքնվել են մեկ բառում: Օրինակ՝ *տերևաթափ* (տերև, թափվել), *շագանակագույն* (շագանակ և գույն), *ծաղկաման* (ծաղիկ և աման) և այլն:

3. Պատմության հորինում ըստ պլանի: Սկզբնական շրջանում ուսուցիչը կազմում է պլան, ապա հանձնարարում, որ աշակերտները պատմեն կարդացածը կամ լսածը ըստ պլանի:

4. Ուշադրության բաշխվածության և կենտրոնացվածության զարգացման համար երեխան պետք է կատարի հետևյալ վարժությունը. անհրաժեշտ է գտնել և ներկել ձայնավորով սկսվող պատկերը: «Մենք հիմա մի խաղ ենք խաղալու: Դու պետք է ուշադիր նայես այս նկարին, գտնես ձայնավորով սկսվող պատկերները և ներկես կարմիր գույնով: Ինչքան շատ գտնես և ներկես, այնքան լավ: Սկսեցինք»:

Հրահանգի հաջող կատարման դեպքում անհրաժեշտ է անպայման քաջալրել երեխային:

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Պետք է ասել, որ կրտսեր դպրոցականի հիշողությունը մեխանիկական բնույթ է կրում: Այսինքն՝ երեխան դժվարանում է մտապահել այն տեղեկությունները, որոնք պարտավոր է հիշել կամքի ուժի գործադրությամբ: Նա ավելի լավ է հիշում այն նյութը, որը հետաքրքիր է, տպավորիչ և մտապահելու համար չի պահանջում կամային ճիգեր: Այս առումով ուսուցչից պահանջվում են լրացուցիչ ջանքեր՝ ուսումնական նյութն առավել տպավորիչ և հետաքրքիր դարձնելու համար:

Մայրենի լեզվից առաջադրվող բազմաբնույթ վարժությունները աշակերտներին մղում են իմաստավորված, գիտակցված մտապահման:

1. «Լսի՛ր և հիշի՛ր»: Բառերի խմբավորում ըստ թեմայի: Ուսուցիչը ընտրում է հինգ զույգ բառեր, որոնցից յուրաքանչյուրն իմաստով կապված է մեկը մյուսին, օրինակ՝ *ամպ-անձրև, գիշեր-լուսին, անկողին- մահճակալ*: Առաջադրվում է երեխաներին ուշադիր լսել, կրկնել երկու անգամ: Այնուհետև ուսուցիչը բառերի յուրաքանչյուր զույգից ասում է մեկ բառ, իսկ երեխաները պետք է հիշեն երկրորդը: Առաջադրանքը բարդացնելու համար կարելի է ավելացնել զույգերի քանակը:

2. Առարկաների, երևույթների, հասկացությունների և բառերի միջև գտնել և առանձնացնել որոշակի կապեր, համեմատել դրանք, գտնել նմանություններն ու տարբերությունները: Խաղ «Ինչո՞վ են նման, ինչո՞վ են տարբեր»: Աշակերտը ինքնուրույն

կերպով պետք է լուծի առաջադրանքում արծածված հարցը՝ հիմք ունենալով իր կենսափորձը, երևակայությունը, հիշողությունը: Ցուցադրել երկու նկար, որոնք իրարից տարբերվում են մի շարք մանրամասներով: «Եկե՛ք գտնենք այս նկարների տարբերությունները: Տեսնենք, ինչեր կան մի նկարում, որ չկան մյուսում»: Այս առաջադրանքները զարգացնում են երեխաների դիտողությունները և տեսողական հիշողությունը: Երեխան պետք է ուշադիր նայի նկարին, մտքում պահի որքան հնարավոր է շատ մանրամասներ, այնուհետև ուշադիր զննի մյուս նկարը և նկատի տարբերությունը:

ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Կանոնավոր ձևավորված և զարգացած խոսքը նախ երեխային ճիշտ հասկանլու և ըստ այդմ նրա հետ աշխատելու հնարավորություն է ընձեռնում, ապա երեխային օգնում է ճիշտ հասկանալու ուսուցման գործընթացում իրեն տրված հրահանգները և համապատասխան գործողություններ կատարելու: Այսինքն՝ ապահովում է կրտսեր դպրոցականի ուսումնառության ողջ գործընթացը: Մայրենի լեզվի դասերին կազմակերպվող բոլոր աշխատանքների վերջնական նպատակը խոսք կառուցելու կարողությունների և հմտությունների մշակումն ու կատարելագործումն է:

Երեխաների խոսքի զարգացման հարցերով զբաղվող հոգեբաններն ու մանկավարժները գտնում են, որ խոսքին լավ տիրապետելը վերակառուցում է երեխայի հոգեկան և մտավոր կարողությունները, զարգացնում ամենից առաջ նրա մտածողությունը: Բառին տիրապետելով՝երեխան հնարավորություն է ստանում առարկայի էական հատկանիշների ճանաչման հիման վրա կատարել ընդհանրացում և լավ է ըմբռնում բառի նշակակությունը, երբ այն կապված է լինում իրականության հետ:

Կապակցված խոսքի ձևավորման և զարգացման նպատակադրումը այս ամենից անկախ կամ առանձին չէ, քանի որ ցանկացած գործունեություն կարելի է համադրել խոսքային նկարագրություններով, զանազան պատումներով: Սակայն կարելի է հստակ տալ կապակցված խոսքի զարգացման բազմաբնույթ առաջադրանքներ.

- Լսածի կամ կարդացածի վերարտադրում, դրա շուրջ հարցերի ձևակերպում, պատասխաններ ուրիշների կազմած կամ տրված հարցերին /դասագիրք, ուսուցիչ, դասընկեր/
- Պատմություն ըստ նկարի, տրված պլանով, թեմայով
- Եզրակացություն, եզրահանգում, դատողություն ըստ գրական կամ տեղեկատվական նյութի
- Իր կարծիքն արտահայտելու և հիմնավորելու առաջադրանքներ

Այսպիսի աշխատանքային մթնոլորտ է ստեղծվում մասնավորապես աշակերտակենտրոն ուսուցմանը նպաստող փոքր խմբերով, զույգերով աշխատանքը, որի ժամանակ երեխաները ոչ միային լսում են մեկը մյուսին, պատմում են, բացատրում իրար, այլև համագործակցում են օգնում իրար: Մի հանգամանք, որով պայմանավորված են ոչ միային մտահաղորդակցական ունակությունների զարգացումը, այլև անձնային որակների ձևավորումը:

Աշակերտենրի խոսքի զարգացումը արտահայտելու ցանկությունը անընդմեջ պետք է խրախուսվի և ամեն երեխայի հնարավորություն տրվի խոսելու և արտահայտվելու: Ուսուցիչը պետք է խուսափի մենախոսությունից, ողջ աշխատանքը պիտի կառուցի աշակերտի հետ երկխոսություն վարելու սկզբունքով:

ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Աշակերտը հաստատապես յուրացնում է այն ժամանակ, երբ նա մտածում է:
Խորհենք այն մասին, թե ինրպես մտածողության, վերլուծության,
զննման առարկա դարձնել այն, ինչն ուսումնասիրվում է
տվյալ պահին կամ շուտով կուսումնասիրվի:
Վ. Սուխոմլինսկի

Մտածողության զարգացումը նման է բույսի ծաղկմանը:
Եթե մենք ցանկանում ենք ծաղիկ աճեցնել, ապա խնամում ենք հողը,
հետևում լույսին ու ջերմությանը, ստեղծում ենք պայմաններ
բույսի ամբողջական առողջ աճի համար և բույսն
իր ժամանակին անպայման կծաղկի:
Լ. Շթայներ

Բոլոր այն խնդիրները, որոնք երեխաների մեջ զարգացնում են շրջապատի առարկաներն ուսումնասիրելու ուշադիր զննելու, ճանաչելու հատկությունները, նպաստում են մտածողության ձևավորմանը: Լեզվական զանազան վարժությունները և խաղերը մտածողությունը զաւգացնելու լավագույն միջոցն են: Որպեսզի երեխայի մտածողությոն որակները զարգանան, հարկ է անընդհատ մարզել, սովորեցնել և հասցնել որոշակի մակարդակի: Այս շատ կարևոր խնդրի լուծման համար կարելի է անցկացնել վարժություններ և առաջադրանքներ:

ՀԵՏԱՔՐՔՐԱՇԱՐԺ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

- Տարբեր երևույթների, հերոսների, ստեղծագործությունների, բառերի արտահայտությունների համեմատություն, դրանց նմանության և տարբերության հայտնաբերում: Օրինակ <<Մտածիր և պատասխանիր>>:
- Առաջարկել երեխաներին ավարտել նախադասությունը:

  Եթե տղան մեծ է աղջկանից, ուրեմն աղջիկը ……. է տղայից:

  Եթե հեծանիվը դանդաղ է ընթանում, քան մեքենան, որեմն մեքենան……է ընթանում, քան հեծանիվը:

Հանձնարարել համեմատել ծանոթ առարկաներ կամ հասկացություններ, բառեր և բառակապակցություններ: Ինպես սեղան և աթոռ, խնձոր և լոլիկ, շուն և կատու բառերը, տրվում են նկարներ/, մաքուր խիղճ և մաքուր ձեռքեր բառակապակցությունները, հերոսներ բնության երևույթներ և այլն: Աշխատանքը պետք է զարգանա աստիճանաբար՝ պարզից դեպի բարդ, տեսանելիից, իրական առարկայից դեպի մտովի պատկերացում, մտքում ծնված պատկերների վեր հանում:

- Երեխան պետք է հայտնաբերի, թե որ բառն է ավելորդ, իր տեղում չէ: Նախնական փուլում այս առաջադրանքը կազմակերպվում է առարկաների, ապա նաև դրանց նկարների ցուցադրման եղանակով: Օրինակ՝սեղանին դրվում են խնձոր, նարինջ, տանձ,դեղձ,ծիրան, լոլիկ ու հանձնարարվում գտնել <<ավելորդը>>: Ցանկացած պատասխան լսելիս պետք է հարցնել ինչու՞: Քանի որ երեխայի մտքի ընթացքին հետևելը շատ ավելի հետաքրքրիր է ,քան պատասխանի ճշգրտությանը հետամուտ

լինելը: Գրաճանաչ դառնալուց հետո այսպիսի առաջադրանքներ կազմակերպվում է բառերի շրջանակներում: Տրվում է մի քանի բառ, որոնք ինչ որ ընդհանրություն ունեն/նույն արմատ են, միավանկ, շնչավոր կամ անշունչ, ածանցավոր կամ պարզ……/:

Օրինակ՝ թվարկված բառերի շարքից երեխաները ընտորում են ավելորդը, որն իր իմաստով չի համապատասխանում տվյալ բառախմբին.

ժպիտ, ուրախություն, տխրություն, ծիծաղ……

նվիրել, ուրախացենլ, բարի խոսք ասել, վիրավորել…….

օգնել, լինել հոգատար, վնասել, աջակցել……

- Խոսքի մեջ համանունների իմաստային տարբերությունների ընկալման ձևավորումը բավական նուրբ աշխատանք է: Սրանց տարբերակման և իմաստի ընկալման համար կարելի է հետևյալ առաջադրանքը տալ, գրատախտակին գծվում են կամ դրվում են արդեն պատրաստի քառակուսի շերտիկներ՝ բառի մեջ մտնող հնչյունների քանակի: Մի կողմում բառակապակցության տեսքով գրվում է համանուն իմաստը, մյուս կողմում՝ մյուսը:

Մարդու ձեռքի ներսի կողմը □□ գետի եզրը □□

Երաժշտական գործիք □□□□□ գիծ քաշելու հարմարանք □□□□□

Մարդու թևի մի հատվածը □□□□□ մուգ կարմիր բանջարեղեն □□□□□

- Դասակարգման կամ խմբավորման ժամանակ առաջարկվում է խմբավորել կամ առանձին սյունակներում դասավորել նույն հատկանիշն ունեցող բառեր, արտահայտություններ, ստեղծագործություններ կամ երևույթներ:

Մասերից դեպի ամբողջական պատկեր: Այս դեպքում նույն թեմայի շուրջ առանձին առանձին նկարներ են տրվում, երեխան պետք է գտնի դրանց հերթականությունը և ամբողջական պատմություն հորինի դրանց շուրջ:

- Դատողական բնույթի առաջադրանքների ժամանակ վերլուծել հերոսների վարքը, կարծիք հայտնել նրանց մասին հիմանվորելնրանց գործունեությունըև եզրահանգումներ կատարել:
- Նույն հատկանիշ ունեցող բառերի թվարկման շրջնում աշակերտներին առաջարկվում են թվել բառեր, որոնք ունեն նույն հատկանիշը: Օրինակ՝ կլոր առարկաներ /խնձոր, գնդակ, փուչիկ/, բարակ, սուր, քառակուսի և այլն:

Հետագայում արդեն նմանատիպ առաջադրանքը տեղափոխել բառերի, բառակապակցությունների նախադասությունների ոլորտ:Հանձնարարվում է թվել նույն արմատը կամ վերջածանցն ունեցող, իմաստով մոտ կամ հակառակ իմաստ ունեցող բառեր:Այստեղ կարող են գտնել նաև թեմատիկ բառախմբերի կազմումն ու աստիճանական հարստացումը:Օրինակ՝ կահույք,ծաղիկ, մրգեր ընդհանուր անունների տակ հավաքել կոնկրետ բառեր (շուշան, վարդ, կակաչ,մեխակ-ծաղիկ): Պետք է ասել որ սա նաև բառապաշարի հարստացման միջոց է, որը կապակցված խոսքի ուսուցման հիմքն է:

- «Թեմատիկ բառաշար»: Ուսուցիչը հանձնարարում է գտնել տրված թեմայի համապատասխան բառեր: Օրինակ՝

  Դպրոց – ուսուցիչ, գիրք, զանգ, գրիչ, նստարան

  Ձմեռ –

  Գրադարան –

  Արձակուրդ –

  Բառակապակցություններն արտահայտել մեկ բառով.

  գայլերի խումբ –

  առյուծի ձագ –

  մեղուների խումբ –

  գլուխ գովել –

- Տրված գոյականներով բանաստեղծական պատկերների հորինում:

Աշակերտին տրվում են գոյականներ, նա պիտի փորձի դրանց իմաստը բանաստեղծական կամ պատկերավոր բառակապակցություններով հաղորդել: Այս դեպքում երեխաներին կարելի է առաջարկել, որ փակեն աչքերը և ասեն, թե ինչ են տեսնում, երբ լսումեն այս կամ այն առարկայի, կենդանու, թռչունի անունը: Սա երևակայության դրսևորման, երեխայի անհատական ընկալման զարգացման շատ լավ միջոց է, ուստի պետք է խրախուսել, որ աշակերտը ազատ և անկաշկանդ արտահայտեն իրենց երևակայության մեջ ծնված պատկերները:

Օրինակ՝ ուսուցիչն առաջարկում է արև բառը, պատասխանը կարող է լինել՝ ոսկեզօծ շողեր, ծաղիկ՝ անուշ բուրմունք, անտառ՝ բնության զարթոնք:

- Մասերից դեպի ամբողջական պատկեր

Նույն տեքստի նախադասությունների հերթականությունը խառը տալ և հանձնարարել, որ երեխաները դասավորեն ըստ մտքի հաջորդականության:

Օրինակ՝ Մեղուն արժանապատվությամբ ասում է, որ ինքը ծնվել ու աշխարհ է եկել ընդհանուր օգուտի համար: Նա ասում է, որ մեղվի աշխատանքն ուրիշն է տանում և նրան ոչինչ չի մնում, իսկ իրենից վախենում են բոլորը: Մի անգամ, երբ հյութ էր քաղում ծաղկից, մոտենում է արծիվը և սկսում ծաղրել նրան:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄ

ստեղծագործությունների դերը մտածողության զարգացման գործընթացում

Ժողովրդական մանրապատում ստեղծագործությունները՝ առածներ, ասացվածքներ, հանելուկներ և շուտասելուկներ, որպես լրացուցիչ և օժանդակ նյութ, մեծ քանակությամբ զետեղվում են տարրական դասարանների մայրենիի դասագրքում: Դրանք տրվածեն հիմնական բնագրերի գլխվոր միտքը, բովանդակային այս կամ այն կողմը պարզաբանելու, խորացնելու կամ ամբողջացնելու նպատակով: Աշակերտին պետք է սովորեցնել գործնականում դրանք զանազանել միմյանցից, մատչելի ձևով բացատրել, վերլուծել՝ ըստ բովանդակության ու ձևի, անգիր անել և օգտագործել խոսքի մեջ:

- Առածներն ու ասացվածքները, ինչպես մաքուր հայելի, արտացոլում են ժողովրդի կյանքն իր բոլոր սքանչելի առանձնահատկություններով: Թերևս ուրիշ ոչ մի բանով հնարավոր չէ երեխաներին այնպես խոր կերպով ընբռնել տալ ժողովրդական կենցաղն ու մտածողությունը, ինչպես դա կարելի է անել առածների ու ասացվածքների նշանակությունը բացատրելով:

Որպես համառոտ, դիպուկ ու պատկերավոր խոսքի դասական օրինակներ, դրանք էապես նպաստում են երեխաների ոչ միայն լեզվի մշակմանը, այլև տրամաբանական ու պատկերավոր մտածողության զարգացման, ուստի պետք է պատշաճ լրջությամբ ու խորությամբ ուսումնասիրվեն:

Առած – ասացվածքների կազմում:

Առածը բաժանվում է երկումասի, հանձնարարվում է ընտրելով սկզբին համապատասխան ավարտ՝ ամբողջացնել.

Ժամանակը	գետնին չի մնա:
Այսօրվա գործը	ոչ դալարի:
Տաշած քարը	կփայլի:
Ով ալարի	վաղվան չեն թողնի:
Աշխատող խոփը	ոսկի է:

- Հանելուկները հետաքրքրություն են առաջացնում երեխաների մեջ՝ զարգացնելով նրանց պատկերավոր մտածողությունն ու բառառապաշարը: Կան հանելուկներ, որոնց լուծման առարկան տառն է: Սրանք երևակայությունը շարժող, նկարագրական կարողությունները զարգացնող առաջադրանքներ են, որոնք նպաստում են խոսքատրամաբանական հիշողության զարգացմանը: Երեխան աստիճանաբար սովորում է գիտակցորեն կառավարել իր հիշողությունը, կարողանում է մտապահել և մտաբերել պահանջվող բառը, նախադասությունը:

Օրինակ՝ *Ի՞նչն է, ի՞նչը. բակի մեջտեղում է, այգու՝ սկզբում:*

Ի՞նչն է, ինչքան շատանա, իր տերը չի կշտանա:

- Դարձվածքները խոսքին տալիս են պատկերավորություն, ոճական երանգավորում, խոսքն ավելի գունագեղ ու արտահայտիչ դարձնում:

Դարձվածքը երեխայի բառապաշարի մեջ մտցնելու համար կարելի է իրականացնել հետևյալ աշխատանքները.

1. Տալ բառեր՝ պահանջելով գրել դրանց համապատաս:ան իրենց ծանոթ դարձվածքները: Օրինակ՝ *արթնանալ – աչքը բացել, զարմանալ – քար կտրել, գունատվել – գույնը գցել:*
2. Հանձնարարել արտագրել այն նախադասությունը կամ քառատողը, որտեղ օգտագործված է տվյալ դարյվածքը:

- Սուտասելուկները տրամաբանական աշխատանք կատարելու հնարավորություն են ստեղծում, որովհետև կարդալուց բացի երեխաները պետք է ցույց տան, թե մտքի ու դատողության ինչ վրիպումներ կան դրանցում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Խոսքի զարգացումն ուղղակիորեն կապված է մտածողության զարգացման հետ: Հիշենք՝ «Ով պարզ է մտածում, նա պարզ է արտահայտվում» ասացվածքը: Աշակերտների խոսքի զարգացման, ազատ և անկաշկանդ արտահայտվելու կարողությունների մշակման համար կան բազմաթիվ միջոցներ.

Հորինի՛ր մի պատմություն նկարի շուրջ:

Պատմի՛ր, թե ինչ ես տեսնում նկարում:

Բնագրին կից նկարապատման բովանդակության պատմում և համեմատում բնագրի հետ:

Անհեթեթ սխալներով լի նկարներում սխալների գտնում, ճիշտ ներկայացում:

Ստեղծված խնդրահարույց իրավիճակներից դուրս գալու ելքերի որոնում:

Հանելուկների հորինում:

Այս առաջադրանքները քայլ առ քայլ «բացում» են երեխայի լեզուն, նա ավելի ու ավելի համարձակ է դառնում իր մտքերն արտահայտելիս, կարողանում է դրանք ձևակերպել տրամաբանական կաղապարներով, եզրակացություններ է անում, դառնում ինքնուրույն ու ինքնավստահ:

Մտածողության և կապակցված խոսքի ձևավորման համար կարևոր են երեխայի մտահորիզոնի ընդլայնումը և ճանաչողական գործունեության կազմակերպումը: Այս առումով նպաստավոր են կարդացածի շուրջ քննարկումները, հերոսների վարքի վերլուծությունը, կարծիքների և տպավորությունների փոխանակումը և այլն:

Խոաքի զարգացմանն են ուղղված նկարային բազմաթիվ առաջադրանքներ:

Երեխաները փոքրիկ երևակայողներ են, և ամեն մի առիթ կարելի է օգտագործել՝ մղելու նրանց ստեղծագործելու, նրանց «լեզուն բանալու», խոսքը զարգացնելու:

Այսպիսով, տարրական դպրոցում մայրենի լեզվի դասերին լեզվական առաջադրանքների և վարժությունների կիրառումը կարևոր նախապայման է դասի արդյունավետության բարձրացման համար, քանի որ աշակերտը առանց կամային մեծ ջանքեր գործադրելու, հիմնականում դրսևորելով հետկամածին ուշադրություն՝ յուրացնում է

մատուցվող դասանյութը, վերհիշում անցած կանոնները, ամրապնդում ու համակարգում իր գիտելիքները:

Նշենք նաև, որ տարրական դպրոցում ուսուցանվող մյուս առարկաները ևս պետք է նպաստեն սովորողների խոսքի զարգացմանը: Օրինակ՝ տեխնոլոգիա առարկայից առաջադրանքներ կատարելիս ուսուցիչը պետք է առաջադրի վիճահարույց հարցեր և առաջադրանքներ, որոնք աշակերտից կպահանջեն մտածել, վերլուծել, քննարկել, կշռադատել և ինքնուրույն պատասխանել: Օրինակ՝

- Ի՞նչ ես կարծում՝ Ինչո՞ւ է լուսակիրը պատկերված մեր գրքում:

- Ուշադի՛ր նայիր՝ արդյո՞ք լուսակրի երեք թարթիչներն ունեն համապատասխան տրամադրություն:

Խոսքի զարգացման նպատակով ուսուցիչը պետք է հատուկ ուշադրություն դարձնի հանգուցային հարցադրումներին և անպայման երեխաներին ներգրավի խոսակցության մեջ, նրանց հնարավորություն ընձեռի պատմել իրենց կողմից կատարված և ավարտված աշխատանքի մասին:

Աշխատանքային գործունեության ընթացքում միմյանց հետ հաղորդակցվելիս երեխաները պետք է օգտագործեն ուրվագիծ, փորձաթուղթ, ձևանմուշ, գծանշում և այլ հասկացություններ ու եզրույթներ: Դրանց կիրառումը նպաստում է բառապաշարի հարստացմանը:

Մաթեմատիկական դիդակտիկ խաղերը, տրամաբանական առաջադրանքները զարգացնում են երեխայի մտածողությունը: Կոփվում է նրա ուշադրությունը, ընդլայնվում են գիտելիքների շրջանակները: Մաթեմատիկայի յուրաքանչյուր դաս պետք է նպաստի երեխայի իմացական և ստեղծագործական կարողությունների զարգացմանը: Ուստի ուսուցման գործընթացում հարկավոր է ստեղծել այնպիսի իրավիճակներ, որտեղ երեխան շահագրգռված լինի աշխատելու և հետաքրքրությամբ կատարելու իր առջև ծառացած խնդիրները: Մաթեմատիկական առաջադրանքներն ակտիվացնում են աշակերտների մտածողությունը, նրանց միտքը դարձնում առավել ճկուն: Օրինակ՝

- Տրված օրինակների արտադրյալները դասավորել աճման կարգով և կարդալ ստացված բառը.

  8 x 6 7 x 6 6 x 3 9 x 7 8 x 7 7 x 7

ց ե կ ս ե ց

- Յուրաքանչյուր արտահայտության մեջ փոխել երկու թվերի տեղերն այնպես, որ ստացվի հավասարություն.

69 : 7 = 3 6 x 7 = 58

(63 : 7 = 9) (8 x 7 = 56)

Թվարկված բոլոր հետաքրքրաշարժ առաջադրանքներն ու մանրապատում ստեղծագործությունները կարևոր դեր են կատարում աշակերտների տրամաբանական մտածողության, հիշողության,ուշադրության զարգացման գործընթացում, ինչպես նաև հարստացնում են երեխաների գիտելիքները:

Մայրենի լեզվի տարրական դասընթացի խնդիրը կրտսեր դպրոցականների լեզվամտածողության և տրամաբանության, մտածելակերպի, ուսումնառության համագործակցային տարրական կարողությունների,համակեցության պարզ ունակությունների ձևավորումն է, ազգային և համամարդկային արժեքների դաստիարակությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ջուլիետա Գյուլամիրյան – Մեթոդական ուղեցույց, «Լույս», Երևան 2004 թ.
2. Վ. Սարգսյան – Այբբենարանի ուղղեցույց, Երևան 2008 թ.
3. Սոնա Սարգսյան - «Որախ մաթեմատիկա», Երևան 2006 թ.
4. Նախաշավիղ 5, 2010 թ., Նախաշավիղ 1-2, 2007 թ.
5. Ռ. Խարազյան - «Աշակերտների բառապաշարի հարստացումը տարրական դասարաններում», Երևան 2003 թ.